## Արձանագրություն N 3

**ՍԳԻ-16/8-ՇՀԱՇՁԲ-15/3 ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան

21 հուլիսի 2016թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ռ.Ա.Պետրոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ժ.Հ.Ներսիսյան, Է.Ավետիսյան, Հ.Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Սարգսյան

**1. Ընթացակարի հայտեր պարունակող ծրարների բացման մասին**
*(Ռ.Ա.Պետրոսյան)*

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված և ներկայացված են հրավերով սահմանված կարգով:

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում Հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են:

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բացառությամբ, «Խաչարամ Կոնսերվատորիա» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտում բացակայում է Հավելված 3.3-ը:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:***

**2. Անհամապատասխանությունները շտկելու մասին**
*(Ռ.Ա.Պետրոսյան)*

Քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ ուստի հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 45-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանությունների մասին ծանուցել՝ «Խաչարամ Կոնսերվատորիա» ՍՊԸ -ին՝ հայտը շտկելու նպատակով, որը պետք է ներկայացնի շտկումները մինչև 22.07.2016թ. 12:00 ներառյալ Լ.Հովհաննիսյանի անվան <<Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ>> ՓԲԸ-ի շենքում, հասցե՝ ք.Երևան, Պ. Սևակի 5, 1- ին հարկ տնօրենի ընդունարան հասցեով:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:***

**3.Մերժված չափաբաժինների մասին**
*(Ռ.Ա.Պետրոսյան)*

Համաձայն ՀՀ Կառավարության 168-Ն որոշման 45-րդ կետի համաձայն մերժել «ՍԱՄՆԱՐՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի 6, 20, 14, 23, 26, 31, 32, 33-րդ չափաբաժինները, որի գնային առաջարկները կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան :

***Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:***

**4.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**
*(Ռ.Ա.Պետրոսյան)*

ՍԳԻ-16/8-ՇՀԱՇՁԲ-15/3 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի գնահատման համար «Խաչարամ Կոնսերվատորիա» ՍՊԸ- ի հայտում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել 2016թ.-ի հուլիսի 22-ին ժամը 12:00 –ին՝ Լ.Հովհաննիսյանի անվան <<Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ>> ՓԲԸ-ի շենքում, հասցե՝ ք.Երևան, Պ. Սևակի 5, 1- ին հարկ տնօրենի ընդունարան հասցեով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ – 0:***

Հանձնաժողովի Նախագահ՝ Ռ.Ա.Պետրոսյան

Անդամներ՝ Ժ.Հ.Ներսիսյան

Է.Ավետիսյան

Հ.Հակոբյան

Քարտուղար՝ Ա.Սարգսյան